523

1. Երբ կնայիմ մատներուդ գործերուն,
Քու մեծությունդ կտեսնեմ,
Կհիանամ, թե ինչպես, Տեր,
Ստեղծած ես ամենն:
Ես իմ խղճալի մարդկային մտքովս
Կջանամ հասկանալ՝
Ինչո՞ւ, ինչպե՞ս են Քու կերպերը,
Ներե՛, Տեր, պարզությանս:

Այո՛, գիտեմ՝
Առանց Քեզի ես ոչինչ եմ,
Առանց Քու սիրո կորսված եմ,
Կյանքս պարապ է:
Այո՛, գիտեմ,
Տեր, զորությանդ կարոտ եմ,
Ներե՛ իմ կասկածներս այսօր,
Մռ սիրտս, հոգիս, կյանքս բոլոր:

2. Տեր, շատ անգամ երբ իմ շուրջս կնայիմ,
Խեղճ, հուսահատ կդառնամ,
Կզարմանամ, թե ինչպես Դու
Զոհ եղար մարդկության:
Փառք Քեզ, Տեր Հիսուս, որ զիս կսիրես,
Խոստացած ես ինձ հոգալ,
Ավելցուր հավատքս՝ Քեզի վստահիմ,
Որ խաղաղ ու քաջ զգամ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025